Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 փետրվարի 2018 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ի ժամանակի ընդունելութեան լուայ քեզ,
եւ յաւուր փրկութեան օգնեցի քեզ»
(Ես. ԽԹ. 8):

Սիրելի՛ հավատացյալներ,

Հավիտենական է Աստված եւ Նրա գործն ու խոսքը: Դարերի ընթացքում հավիտենական Աստված մշտապես խոսել եւ գործել է Իր արարածների կյանքում երբեմն հրեշտակների, երբեմն էլ մարգարեների միջոցով: Խոսել է՝ ուսուցանելու, խոսել է զգուշացնելու, խոսել է հուսադրելու համար: Եվ ահա, Եսայի մարգարեի միջոցով էլ այսպես է ասում. «Լսի՛ր Իսրայել, պատեհ ժամանակ փրկեցի քեզ եւ օգնեցի քեզ» (հմմտ. Ես. ԽԹ. 8):

Աստված խոսքով եւ գործով միշտ ներկա է եղել ոչ միայն Իր ընտրյալ ժողովրդի, այլեւ ա՛յն ազգերի կյանքում, ովքեր հավատացել եւ խոնարհել են իրենց գլուխները Նրա առջեւ: Մեր ազգը եւս խոնարհվել է նրա առջեւ, փարվել Սուրբ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների քարոզած Հիսուս Քրիստոսին: Ազգովի ծնկել ենք եւ Արածանիի ջրերում առաջինը մկրտվել որպես ազգ եւ պետություն: Դրոշմվել ենք մեր Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռքով՝ Ս. Հոգու լույսն ընդունելով մեր մեջ: Եվ դարեր անց մեր ազգն իր կյանքով ու գործով վկայեց, թե ինչքա՛ն եւ ինչպե՛ս է սիրում այն թագավորին, ում հավատում է, եւ այն հայրենիքը, որի թագավոր ճանաչում է միայն Քրիստոսին:

Այսօր հիշողությունն է բոլորիս համախմբել այստեղ, ազգային եւ կրոնական պատկանելության ուրախությունը, որ մեր նախնիք 1500 տարի առաջ անվարան կանգնեցին «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» եւ հաղթեցին այն բանակին, որը տասնյակ անգամ ավելին էր. հազարները հարյուր հազարների դեմ ելան եւ նահատակվեցին:

Սիրելի՛ հավատացյալներ, այս նահատակության, արիության եւ ոգի կերտող տոնին այսօր համախմբվել ենք այստեղ՝ ասելու. մենք Սրբոց Վարդանանց հետ ենք, այն հազար եւ երեսունվեց նահատակների հետ, ովքեր մարտից առաջ իրենց արյունը միախառնեցին Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի արյան հետ եւ իրենց մարմինը միավորեցին Նրա մարմնին: Նրանց հետ ենք, ովքեր երկինք բարձրացան՝ միանալով այն Տիրոջը, ում համար չխնայեցին իրենց կյանքը, այն Տիրոջ, Ով որ ասում էր. «Լո՛ւր Հայաստան, պատեհ ժամանակ փրկեցի քեզ եւ օգնեցի քեզ, երբ խնդրեցիր»:

Ա՛յս է Վարդանանց դասը: Հազարամյակներ շարունակ այս մասին են ուսուցանում մեր նախնիները՝ Ս. Հայրապետները, ծնողները, վարդապետները եւ ուսուցիչները: Այս պատմությունը մեզ հայտնի է դեռ օրորոցից, երբ մեր ծնողները, ոգեւորված Վարդանանց հերոսներով, իրենց զավակներին կոչել են Վարդան, Արտակ, Խորեն, Գարեգին եւ այլ անուններով, ովքեր այսօր իրենց կյանքով փորձում են ոչ միայն վկայել, այլեւ արթնացնել, սերնդեսերունդ փոխանցել ոչ միայն հաղթական այդ օրվա հիշողությունը, այլեւ վկայությունն այն իրականության, որ մեր ազգը Տիրո՛ջն է ապավինում, այն բազկին, որը զորանում է Տիրոջով, Նրա խոստումներով:

Վարդանանց պատերազմը, սկսվելով 451 թ., շարունակվեց եւ հասավ մինչեւ մեր օրերը: Վարդանանք ոգի՛ են, ու՛ժ են, բայց այդ ամենից վեր՝ սո՛ւրբ են, որոնց անունները, ապրելով մեր մեջ, այսօր էլ կարողանում են կերտել մեր վաղվա ապագան: Այդ անուններն ու ոգին կերտեցին Սարդարապատ, Ապարան, Ղարաքիլիսա, տարիներ անց, ինչու՞ ոչ, Երկրորդ աշխարհամարտ եւ Արցախյան գոյամարտ: Այնտեղ էլ կային Գարեգիններ, Գեւորգներ, Վարդաններ, եւ եկան նորերը՝ Ադամ, Տիգրան, Նորիկ, Հենրիկ, Քյարամ, ովքեր նույն ոգով կանգնեցին՝ առանց նահանջելու, պատրաստակամ՝ իրենց կյանքը տալու: Վարդանանք իրենց կյանքի գնով մեզ փոխանցեցին Քրիստոսի հավատքին փարվելու զորությունը, հանուն ժողովրդի, հայրենիքի հավատքի ու եկեղեցու չխնայել կյանքը:

Այսօր՝ Վարդանանց տոնին, տո՛նն է նաեւ քաջերի, ովքեր հարյուր տարի առաջ կերտեցին Սարդարապատի հերոսամարտը:

Սիրելի՛ հայորդիք, ուխտավորներ հավատացյալներ, Հայոց Հայրապետի իմաստուն տնօրինությամբ այսօր համայն աշխարհի հայությանը պիտի ներկայացվի սրբազան կոնդակը՝ նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության եւ Սարդարապատի հերոսամարտի հարյուրամյակին:

Պատահական չէ օրվա ընտրությունը եւ կարեւորությունը կոնդակ հրապարակելու համար: Այն մեկ անգամ եւս ընդգծում է, թե ինչպիսի կամք, անմնացորդ ու անջնջելի հետք են թողել Վարդանանք հայ ժողովրդի կյանքում:

Ինչպես Ավարայրի ճակատամարտից առաջ Ղեւոնդ Երեցի եւ քահանաների ձեռքով Տիրոջ մարմինն ու արյունը բաշխվեց հայորդիներին՝ հաղթանակելու անկոտրում կամքով, այդպես էլ Սարդարապատի ճակատամարտից առաջ հայ հոգեւորականները, ի գլուխ ունենալով Գարեգին եպիսկոպոսին, եւ ոգեւորված ու ոգեշնչված Գեւորգ Ե. Հայոց Հայրապետի քաջ օրինակով, հորդորեցին չնահանջել, այլ կյանքով օրինակ լինել ազգին, տանել հաղթանակ, կերտել պետություն, որը թեեւ կարճ գոյատեւեց, բայց այսօր տոնում է հարյուրամյակը: Աստծու կամքով եւ մեր ամենքիս աղոթքով խնդրենք, որ Աստված խաղաղություն պարգեւի Հայաստանի Հանրապետությանը, ողջ աշխարհին եւ համայն մարդկությունը միշտ խաղաղության ու անդորրի մեջ լինի:

Սիրելինե՛ր, շնորհավորում եմ բոլոր նրանց, ում անվանակոչության օրն է: Թույլ տվեք ձեր բոլորի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության եւ հավատացելոց անունից շնորհավորելու Հայոց Հայրապետին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ում անվանակոչության օրն է նաեւ այսօր: Բոլորիդ անունից շնորհավորելով՝ ասենք՝ Հայրապե՛տ Հայոց, Աստված Ձեզ Իր օրհնությամբ եւ ընտրությամբ բազմեցրեց Լուսավորչի գահին. ամենքիս աղոթքն է առ Աստված, առ Ս. Վարդանանք եւ Ձեր հովանավոր Ս. Գարեգին, որպեսզի անհատնում պահի Ձեր կյանքի օրերը, որ կարողանաք իրականություն դարձնել այն բոլոր ծրագրերն ու երազները, որ ունեք հանուն մեր ազգի, հանուն մեր ժողովրդի եւ մեր հավատացելոց. ամեն: